Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ծրագիրն իրականացվում է ՀԲԸՄ կողմից՝ ԵՀՀ-ի հետ համագործակցությամբ

Դյուրակիր համակարգիչների գնման մրցույթի հրավեր

11 ապրիլի, 2018 թ.

«Վիքիմեդիա Հայաստանը» գիտակրթական հասարակական կազմակերպությունը Հայկական բարեգործական ընդհանուր միության «ՔՀԿամուրջ» ծրագրի դրամաշնորհի շրջանակներում հրավիրում է իրավաբանական անձանց ներկայացնելու ***դյուրակիր համակարգիչների գնման մրցույթի համար գնառաջարկներ***: Մատակարարի ընտրությունը իրականացվելու է՝ հիմք ընդունելով ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չափանիշներին համապատասխանելիությունը, տրամադրվող գինը, մատակարման ժամկետները, արտադրության երկիրը: Յուրաքանչյուր կազմակերպություն կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ:

Տեխնիկական բնութագիր

1. Քանակը – 30 հատ
2. Պրոցեսորի տեսակ – Նվազագույնը Dual Core
3. Պրոցեսորի հզորությունը – նվազագունը 1.6 GHz
4. Օպերատիվ հիշողությունը – նվազագույնը 4 ԳԲ
5. Կոշտ սկավառակ – 500 ԳԲ 5400 RPM, ցանկալի է ունենա կտրուկ շարժումների ժամանակ անջատվելու հնարավորություն
6. Օպերացիոն համակարգ – Windows 10
7. Վիդեո ելք – HDMI
8. Անլար կապ – WiFi նվազագույնը 802.11 bgn
9. Ավտոնոմ աշխատանքի տևողություն – նվազագույնը 6 ժամ
10. Էկրանի մեծություն - 15.6 in
11. Քաշը – առավելագույնը 2,5 կգ
12. Երաշխիք – նվազագույնը 3 տարի

Հայտը պետք է ներկայացվի կազմակերպության պաշտոնական ձևաթղթի վրա, կնքված և ստորագրված կազմակերպության ղեկավարի կողմից: Այն պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

- Ապրանքի տեխնիկական նկարագիրը:
- Վաճառող կազմակերպության անվանումը:
- Մեկ հատի գինը ՀՀ դրամով, ինչպես առանց ԱԱՀ-ի[1] ,այնպես էլ՝ ներառյալ ԱԱՀ-ը:

[1] Մատակարարին տրամադրվելու է ավելացված արժեքի հարկից ազատված լինելու մասին տեղեկանք:

- Առաքման ժամկետը:
- Արտադրող երկիրը:

Մատակարարման և կատարման այլ պայմաններ.

- Ապրանքի գինը պետք է լինի ամրագրված և ենթակա չէ որևէ փոփոխման Պայմանագրի իրականացման ընթացքում:
- Ապրանքի համար վճարումներն իրականացվում են ապրանքի ձեռք բերումից հետո՝ մատակարարի բանկային հաշվին փոխանցման եղանակով: Մատակարարի պահանջով կարող է կատարվել կանխավճար, բայց ոչ ավելի, քան ապրանքի ձեռք բերման գումարի 50 տոկոսը՝ համապատասխան կանխավճարային հաշվի հիման վրա:

Գնառաջարկի տեսածրված (scan) տարբերակն անհրաժեշտ է ներկայացնել մինչև ս.թ. ապրիլի 16-ը ժամը 18:00-ը ուղարկելով info@wikimedia.am էլեկտրոնային փոստի հասցեին՝ նամակի վերնագրում նշելով «Համակարգիչների գնման մրցույթ» բառերը: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 093118800 Վիքիմեդիա Հայաստանի վարչական հարցերով պատասխանատու Միեր Բեքարյանին: